# Նվիրումով ապրած կյանք

## *Ֆադեյ Սարգսյանի «Կյանքի դասերը»*

դուրս եկան երիտասարդներ, որոնք հետագայում դարձան հանրաճանաչ հեղինակություններ, գիտնականներ, ակադեմիկոսներ: Պատանեկության շրջանում նրանց ձեռքից ձեռք անցնող գրքերը հափշտակությամբ կարդում էր նաեւ նրանցից տարիքով ավելի փոքր Ֆադեյը եւ ձեւավորվում որպես գիտությունը հայրենասիրությանը շաղկապող անհատ: «Բակի մշտապատրաստ ռադիոտեխնիկը եւ էլեկտրիկը», այսպես է վերհիշում իր մանկությունն ու պատանեկությունը հետագայում արդեն անվանի անձնավորությունը:

Երբ բուռն ապրած կյանքն արդեն հետեւում էր, Ֆադեյ Սարգսյանի հոգեւոր ներուժը դեռ գործելու է մղում նրան, եւ ստիպում նստել գրասեղանի առաջ: Քայլ առ քայլ շնչավորվում, ամբողջականանում ու ծնվում է «Կյանքի դասեր» գիրքը: Այն ամենը, ինչը տվել է կյանքը, անցել է իր ժողովրդին ու հայրենիքին դառնալով նրա շնչառության մի կարեւոր հատվածը, եւ չի մարելու որպես արդեն անցած, ավարտված, իրեն սպառած գործողություն:

«Կյանքի դասեր»: Գիրքը գրվել է 2000-ին, լրամշակված վերահրատարակվել 2001-ին: Հայ գրականությունը հուշագրության օրինակներ շատ ունի, տարբեր ուղղվածություններով՝ ինքնակենսագրական, ճանապարհորդական, գեղարվեստա-

պետք է նշել «Հրազդանմեքենա» միավորումն իր մասնաճյուղով, «Արաքս», «Մարս», «Տրանզիստոր», անջատիչների, չափող սարքերի, կոնդենսատորների, մի շարք նոր էլեկտրոնային հաշվիչ մեքենաների գործարանների ստեղծումը եւ այլ օժանդակ կառողությունների կազմակերպումը», վերհիշում է հեղինակը:

Նկարագրելով խոշորագույն ձեռնարկումները հանրապետության հաշվողական տեխնիկայի զարգացման ուղղությամբ՝ «Կյանքի դասերի» հեղինակը ողեգրել է գրելաոճի հետեւյալ տարբերակը. անձն աննկատ թողնել գիտության բնագավառում ունեցած բոլոր ձեռնարկումներում: Իսկապես մտավոր պոտենցիալով հզոր ու հոգեւոր նվիրումներով անունների մասին պատմող էջերը Ֆ. Սարգսյանի հուշագրությունը հարստացնում են եւ գիտական եւ պատմական արժեքներով:

Չափազանց կարեւոր արձանագրություններով է հարուստ ակադեմիկոս Ֆադեյ Սարգսյանի «Կյանքի դասերում» տեղ գտած Մերգելյան ինստիտուտի աշխատանքային փորձը: Այստեղ ոչ միայն գիտական նվաճումների արձանագրություններն են, այլեւ՝ զուտ մարդկային գործոններին տրված լուծումները: Վերաբերմունք Սերգեյ Մերգելյանի նկատմամբ, որի դեմ հսկայական պայքար կար ծավալված: Աշխա-




թյունը մի գեղեցիկ, ուրույն ու հետաքրքրական վավերագիր է Կարեն Սերոբի Դեմիրճյանի մասին: Վերջինս, որ ընդհանրապես թե կյանքում, թե աշխատանքային առանձնահատուկ գործունեության ընթացքում անտեսել էր հուշագրության տեսակի կարեւորությունը, մեզ է վերադառնում Ֆադեյ Սարգսյանի գրքի իրեն նվիրված բաժնով: «Հայացքների ու նպատակների ընդհանրությունն է տասնամյակների ընթացքում նպաստել մեր ընկերության եւ բարեկամության ամրապնդմանը», գրում է Ֆ. Սարգսյանը: Իսկ ընդհանրությունն այն ժամանակ, Կարեն Դեմիրճյանի կուսակցական ղեկա-

խորհրդային երկրի գիտական մի ողջ սերնդի: Այնուհետեւ արժեքավոր տեղեկություններ՝ հանրապետության ինքնապահովումն իրականացնող ծրագրերի մասին, որոնք վերաբերում են գյուղատնտեսական արտադրանքներին (անասնապահություն, խմիչքների արտադրություն, «Դեմիրճյանի խնձորի» այգիներ), օպերային թատրոնին, երիտասարդական պալատին, մարզահամերգային համալիրին, նոր շուկաներին, հիվանդանոցներին, դպրոցներին, կոմունալ օբյեկտների կառուցմանն ու վերակառուցմանը:

Լինելով մարդամոտ եւ մարդկային հարաբերություններում ճկուն անձնավորություն՝ Ֆադեյ Սարգսյանը ոչինչ չի թաքցնում «վերեւների» մասին, ներկայացնելով իրական էությունը՝ հաճախ հումորով, հաճախ՝ դառը ճշմարտությամբ:

Գիրքը գրված է աշխույժ հումորով, օրինակ՝ մետրոպոլիտենի, որի շինարարության թույլտվությունը տրվել է անեկդոտային հումորով:

«Ընդհատելով շինարարության մասին իմ զեկուցումը, Ա. Ն. Կոսիգինն ասաց. «Ընկ. Սարգսյան, թույլ կտա՞ք ես զեկուցեմ»: Ես սկզբից անհանգստացա, կարծեցի գործը տանուլ ենք տվել, բայց ինչ կարող էի անել, ասացի՝ խնդրեմ: Եվ նա կիսածիծաղելով ասաց. «Բանն այն է, որ հայերը կառուցել են տրամվայի նոր գծեր, բայց քանի որ քաղաքի տեղանքը կտրտված է, հարկ է եղել թունելներ փորել, որպեսզի ունենան արա-

քի՝ «Անցանկալի անձի կարգավիճակում» բաժինը Ֆ. Սարգսյանի՝ Նախարարների խորհուրդը թողնելու պատճառների մասին է, ենթատեքստում խորհրդային երկրի առավել ամբողջական նկարագրությունը:

Գիտությունների ակադեմիայի նախագահի պաշտոնը, որ վարում է նա այսօր, Ֆ. Սարգսյանի անկոտրում ոգու, կամքի, իր երկրին օգտակար լինելու պատշաճ մակարդակի վրա պահելու ինքնազոհողության մասին է վկայում:

Այսօր էլ Ֆադեյ Սարգսյանը նույն աշխատանքային ծանրաբեռնվածությունն ունեցող անհատն է, որ իր խոստովանությամբ, դեռ անելիքներ ունի բազում հետաքրքրական հանդիպումների ու գործերի մասին: Գնահատելով գրքի խմբագրի՝ ժիրայր Ավետիսյանի աշխատանքը «Կյանքի դասերին» կենդանություն տալու առումով, կարծում եմ, բոլորս ենք սպասում նրա շարունակությանը:

«Կյանքի դասերը» գիրքը փաստում է Ֆադեյ Սարգսյանի խոսքերը գիտական ներուժի մասին, որ հետ ձեռք չի բերվում, իսկ կորցնելը դժվար չէ: Քանի դեռ իր ժողովրդի հետ է անվանի ակադեմիկոսը, հայ ժողովուրդը հանձին նրա պետք է ունենա գիտական ներուժ պահելու եւ ուղղորդելու խորհրդատուի:

ՖԵԼԻՔՍ ԲԱԽՇԻՆՅԱՆ